



**25.07.2013**

<<Էրեբունի>> պատմահնագիտական արգելոց-թանգարանի նախաձեռնությամբ վաղը՝ հուլիսի 26-ին Էրեբունիի ֆրանսիական հնագիտական արշավախմբի անդամ, Ներքին Նորմանդիայի հնագիտական ծառայության ղեկավար Ֆրանսուա Ֆիշե Դը Կլերֆոնտենը հանդես կգա <<Խաչվող հայացք. Նորմանդիա-Էրեբունի>> դասախոսությամբ՝ ներկայացնելով Ներքին Նորմանդիայի հնագիտական ժառանգությունն այն նույն պատմական ժամանակաշրջանում,

երբ Ուրարտուի հզոր արքաներից Արգիշտի Ա-ն հիմնադրեց Էրեբունի քաղաք-ամրոցը՝ մեր սիրելի քաղաքամայր Երևանի բնօրրանը: Ֆրանսիացի մասնագետի զուգահեռներն ու համեմատականները թույլ կտան մեկ անգամ ևս արժևորել Ուրարտուի ճարտարապետությունը, տնտեսությունն ու մշակույթը՝ հին աշխարհի պատմության համատեքստում, ինչպես նաև ամրապնդել Էրեբունիի անգնահատելի պատմամշակութային արժեքը մեր տարաշաճրջանի և Երևանի համար:

Ֆրանսիացի մասնագետը կներկայացնի նաև մեկ այլ թեմատիկ զեկույց՝ նորմանդական դղյակների հաշվառման, գրանցման և ուսումնասիրման մեթոդների վերաբերյալ:

Դասախոսությունները տեղի կունենան Էրեբունի թանգարանում, հուլիսի 26-ին, ժամը՝ 15:00-ին: Մուտքն ազատ է, սակայն տեղերը սահմանափակ են /50 տեղ/: